ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3

ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան «29» օգոստոսի 2019թ.

2019թ-ի օգոստոսի 14-29, ՀՀ, ք. Երևան, Հ. Հակոբյան 3, 3-րդ հարկ 301 սենյակ հասցեում՝ «Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» Հասարակական կազմակերպության (այսուհետ նաև «ԱՏՁՄ» ՀԿ) գրասենյակում տեղի ունեցավ ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

Արկադի Սահակյան	ԱՏՁՄ ՀԿ իրավաբան (հանձնաժողովի նախագահ).
Ասյա Սեփխանյան	ԱՏՁՄ ՀԿ միջոցառումների կազմակերպման մենեջեր.
Արթուր Ավետիսյան	ԱՏՁՄ ՀԿ միջոցառումների կազմակերպման մենեջեր.
Կարեն Մկրտչյան	«ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ ներկայացուցիչ (հանձնաժողովի քարտուղար):

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Սահակյանը, իսկ քարտուղարն էր՝ Կ. Մկրտչյանը:

ՕՐԱԿԱՐԳ

1. ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման արդյունքների հաստատման մասին:
2. ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի ընտրված մասնակից հայտարարելու մասին:
3. Պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը հաստատելու մասին:

1.ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍՆԱԿՑԻ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՀԱՅՏԻ՝ ՀՐԱՎԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Զեկուցեց քարտուղար Կ. Մկրտչյանը՝ հայտնելով, որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրվել է ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի ֆինանսական միջոցների հարցման մասին տեղեկատվություն, որը քարտուղարի կողմից ներկայացվել է հանձնաժողովի անդամներին:

Հանձնաժողովն արձանագրեց, որ.

ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի **«Սայմոտեկ» ՍՊԸ**-ի կողմից սահմանված կարգով չեն ներկայացվել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերի 2-րդ մասի 3-րդ բաժնով նախատեսված փաստաթղթերը:

Որոշվեց՝

1. Քարտուղարին՝ ծանուցել մասնակցին առաջարկելով սահմանված կարգով շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովն արձանագրեց, որ մասնակցի կողմից սահմանված կարգով շտկվել են անհամապատասխանությունները:

Որոշվեց՝

2. Հաստատել ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնմանն ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացված հայտի՝ հրավերի պահանջներին համապատասխանության գնահատման հետևյալ արդյունքները.

1) **«Սայմոտեկ» ՍՊԸ**՝ բավարար.

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

2. ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԸՆՏՐՎԱԾ ՄԱՍՆԱԿԻՑ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Որոշվեց՝

1. ԱՏՁՄ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնման ընթացակարգի **1-ին** չափաբաժնի մասով ընտրված մասնակից հայտարարել **«Սայմոտեկ» ՍՊԸ**-ին:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

3. ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵՔՍՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հանձնաժողովի քարտուղար Կ. Մկրտչյանը ներկայացրեց պայմանգիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստի նախագիծը:

Որոշվեց՝

1. Հաստատել պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3
Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Սահակյան _____

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Սեփխանյան _____

Ա. Ավետիսյան _____

Հանձնաժողովի քարտուղար՝

Կ. Մկրտչյան _____